

13303



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



« 06 » 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 267 - 24

Նախաձեռնող՝

«Կոնստրակտ գրուպ» ՍՊԸ

ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Արշակունյանց փողոց հ. 9/5

Գործունեությունը՝

Կենտրոն վարչական շրջանի Արշակունյանց փողոց 9/5  
հասցեում արտադրական մասնաշենքի  
վերակառուցում և բազմաբնակարան  
բնակելի շենքի կառուցում

ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 267 - 24

«06» դեկտեմբերի 2024թ.

**Կենտրոն վարչական շրջանի Արշակունյանց փողոց 9/5 հասցեում արտադրական մասնաշենքի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ Փաստաթղթի տեսակը՝	«Կոնստրակտ գրուպ» ՍՊԸ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝ Գտնվելու վայրը՝	«Բ» կատեգորիա ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

**Ներածական մաս.** «Կոնստրակտ գրուպ» ՍՊԸ-ն նախատեսում է Կենտրոն վարչական շրջանի Արշակունյանց փողոց 9/5 հասցեում արտադրական մասնաշենքի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման կադաստրային ծածկագրով N01-006-0317-0039 վկայականը, Երևանի համայնքապետարանի կողմից տրված N01/18-07/1-3834-Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխվելու է հողի նպատակային և գործառնական նշանակությունը), գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց փողոցայում՝ 9/5 հասցեում: Այն իրենից ներկայացնում է նախկին «Ձյունիկ սառնարան»-ի շենքի և այլ պահեստային մասնաշենքերի տարածք, որտեղ



այժմ առկա է 7,5-8,0 մետր փորված փոսորակ: Տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 962.2-962.9 մետրի սահմաններում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ տարածքում գրունտային ջրերը գտնվում են 13.5-14.0 մետր խորությունների վրա: Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ և պրոցեսներ տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքում ծառայութային բուսականությունը, հողաբուսաշերտը բացակայում է, չկան բնության և պատմամշակութային հուշարձաններ, Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Նախատեսվող բնակելի շենքը կլինի հին պատմամշակութային կառույցի վերակառուցված և նոր կառուցվող բնակելի շենքից բաղկացած մեկ ընդհանուր շենք:

Հին պատմամշակութային կառույցին կից կառուցվելու է 22 հարկանի 3 մասնաշենքերից բաղկացած բնակելի համալիր: Նախատեսվող շինությունը բաղկացած կլինի ստորգետնյա 2 հարկանի ավտոկայանատեղիից՝ նախատեսված 127 մեքենաների համար և վերգետնյա 20 հարկից: Առաջին և երկրորդ հարկերը նախատեսվում է հասարակական նշանակության, 3-րդ և 4-րդ հարկերը համակցված՝ բնակելի և հասարակական, 5-րդ հարկից մինչև 20-րդ հարկերը՝ բնակելի նշանակության: Հասարակական հատվածում նախատեսվում են խանութներ, առաջին անհրաժեշտության օբյեկտներ, օֆիսային տարածքներ:

Ելնելով նոր կառուցվող և գոյություն ունեցող կառույցների հասարակական հարկերի նիշերի անհամապատասխանելիությունից՝ կպահպանվեն գոյություն ունեցող կառույցի ճակատները, իսկ ներսում նիշերը կփոխվեն՝ ծածկերը բերելով տրամաբանական նիշերի: Դարպասը, որը հանդիսանում է գոյություն ունեցող պատմամշակութային կառույցի ճակատի անմիջական շարունակություն, կպահպանվի, կվերականգնվի կամարաշարը, իսկ մետաղական դարպասները կվերանորոգվեն և կտեղադրվեն նույն ձևով:

Գոյություն ունեցող 4 հարկանի շենքի (յուրաքանչյուր հարկը 750 քմ) բակային հատվածն ամբողջությամբ քանդվելու է՝ ամբողջությամբ պահպանելով ճակատային հատվածը: Քանդումը կիրականացվի տեխնիկական միջոցներով առանց պայթեցման աշխատանքերը:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողի մակերեսը՝ 3227 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 940 քմ- 29.1 %,
- կանաչապատման մակերեսը՝ 1300քմ- 40,28 %,
- մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 987 քմ,
- գոյություն ունեցող վերակառուցվող կառույցը՝ 700 քմ-21.7 %,
- ստորգետնյա յուրաքանչյուր հարկի մակերեսը՝ 2897.5 քմ:

Ստորգետնյա հարկում կիրականացվեն երկաթ/բետոնե պիլոններ, իսկ վերգետնյա հատվածում կառույցները կբաժանվեն սեյսմիկ կարով՝ 10 սմ հեռավորությամբ:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կիրականացվի անհատական լուծմամբ՝ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով: Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ՝ արտաձուլում իրականացվելու է արտաձուլման համակարգերի միջոցով, օդահեռացումը երկու՝ վերևի և ներքևի հատվածներից, հասարակական տարածքներից օդի արտաձուլում՝ բնական եղանակով, սառնամատակարարումը՝ անհատական օդորակիչների համակարգով:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների պահանջներին համաձայն՝ բնակելի և հասարակական շենքերի ստորգետնյա



հարկերը կարող են ծառայել երկակի նշանակության՝ որպես ավտոկայանատեղի, որտեղ նախատեսված է ավտոմատ հրդեհաշիջման համակարգ, իսկ անհրաժեշտության դեպքում որպես պարզագույն թաքստոց՝ նախատեսված բնակիչների և հաճախորդների համար, որտեղ նախատեսված է իրականացնել սանհանգույցներ պատսպարանից օգտվողների համար, մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքն ապահովված կլինի օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ նախատեսված են բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ՝ թեքահարթակներ:

Բազմաբնակարան բնակելի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության համար նախատեսվում է իրականացնել միջոցառումներ՝ երեսպատման համակարգ, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի հարկի ջերմամեկուսացում, ջերմության խնայողության համար ջերմօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը, էլեկտրամատակարարումը, գազաֆիկացումն իրականացվելու է համաձայն գործող պայմանագրերի:

Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ:

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրականացվի հիմքերի փորման աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար իրականացվելու են մոտ 25000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր, որից 21000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը կիրականացվի համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասական ազդեցությունները և ռիսկերը կապված կլինեն փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կլինեն՝ արտադրամասերի քանդման և հիմքերի փորման ընթացքում փոշու և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի արտանետումները (CO, NOx):



Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- քանդման և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի ժամանակավոր պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը,
- շինարարության ընթացքում, փոշեգոյացումը կանխելու նպատակով, շենքերի արտաքին մասի ծածկում անթափանց թաղանթով,
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- հոսքաջրերի հեռացում պարզարան, մեխանիկական նստեցում, նստվածքի հեռացում,
- շինարարական տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործում,
- շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում,
- աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած շինարարական թափոնների տեղափում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսված միջոցառումների իրականացմամբ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Նախատեսվող գործունեությունը ջրային ռեսուրսների աղտոտվածություն կամ հնարավոր ազդեցություն չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման, կենսաբազմազանության պահպանման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակները կլինեն կենցաղային աղբը՝ 23.04 տ, որը կհավաքվի տեղադրված աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, մոտ 1370 խմ շինարարական աղբը, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 21000 խմ ծավալով, որոնք ամբողջությամբ կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ 120 խմ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության



պահանջներին համապատասխան: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, կաթիլային եղանակով: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N 108-Ն որոշման համապատասխան:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանը, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, տարածքի ջրցանում փոշենստեցման նպատակով՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, մշտադիտարկումներ նորատունկ ծառերի աճի և խնամքի համար, հարակից տարածքներում կենսաբազմազանության մշտադիտարկումներ 3 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Երևանի ավագանու որոշման համաձայն՝ շինարարական հրապարակում կտեղադրվեն փոշու առցանց չափիչ սարքեր:

Շինարարության ընթացքում մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 2720000 ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լուումներն իրականացվել են Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում:

Հանրային լուումներին գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գնահտաման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում, և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակման մեջ:

Առկա են Երևանի քաղաքապետարանի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դրական կարծիքները և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2024թ. նոյեմբերի 7-ին կայացած 17-րդ նիստի արձանագրության քաղվածքը՝ աշխատանքային նախագիծն ընդունելի համարելու վերաբերյալ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման քանդակման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, հեռանկալի



աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան, Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի հիման վրա:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Մինչև նախատեսվող գործունեության իրականացումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն:

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Կոնստրակտ գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյանց փողոց 9/5 հասցեում արտադրական մասնաշենքի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան